ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<17>> հուլիսի 2025թ. Ն ՄՈ/705-Ա

ք. Արմավիր

«ԱՐԳԻՆԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Նարինե Մարկոսյանի 2025 թվականի հուլիսի 16-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Արգինայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մարկոսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի հուլիսի 21-ից օգոստոսի 22-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նարինե Մարկոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արգինայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արգինայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Քաջիկ Այվազյանին:

3. Արգինայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Քաջիկ Այվազյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հուլիսի 21-ից օգոստոսի 22-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Նարինե Մարկոսյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 25-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099
2025-07-17 10:33:22 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ